բեկամի միաբանութեան մերոյ։ Ողջոյն տան ձեզ իւրաքանչիւր յանուանէ ամենայն միաբանք մեր։ Ո՛ղջ լերուք ընդ յամայր ամանակս, ի պարծանս միաբանութեան մերոյ։

Գրեցաւ գիրս ի Վենետիկ ի թուականութեան Տեառն 1750, ի 20 նոյեմբերի

Ստեփաննոս վարդապետ ՄԽԻԹԱՐԵԱՆ
Աբբայհայր միանձանց հայոց
կարգին սրբոյն Աբբայ Անտոնի

ՃԾԳ.

Կ'արժէ որ հրատարակենք հոս Հ. Վրթանէսի հետևեալ տեղեկութիւնները, ուր դարձեալ պիտի նշմարենք Հռովմայ մէջ Հայոց ձեռք բերած բարի անունն ու վայելած համակրութիւնը։

Ամենապատիւ և գերյարգոյ տեառն տեառն Ստեփաննոսի
վարդապետի և աբբայ հօր մերոյ

... այսօր յերեկոյ գնացաք յուտել զընթրիս ուխտաւորաց ինն անձինք ևեթ բովանդակ մեծամեծք. և լուային անդ զմեր ոտս, զորոյ մի ըստ միոջէ պատմել չկարեմ այժմ. և ապա արարաւ վասն մեր խրախութիւն այլազգ քան զհասարակացն, ուր ի սպասու կային մեծամեծք, և գլուխ նոցա ամենեցուն երևելի ոմն իշխանազուն եպիսկոպոս, զորոյ սիրոյն և զմարդասիրութենէն ի յընդունիլն զմեզ և ի ծառայել՝ ոչ կարեմ պատմել։ Նոյնպէս և զայլոց մեծամեծացն։ Լուեալ կարտինալ Կարաֆային պաշտպանի ազգին մերոյ եթէ եկեալ են ուխտաւորք հայոց ի յընթրիսն, եկն թօրչիօք և բազում սպասաւորօք, սպասաւորել մերոյ սեղանոյ, և կիսաժամաւ կացեալ անդ, որպէս և այլ իշխանազունք բազումք, սպասաւորէին այնպիսի խոնարհութեամբ, որպէս ոչ ծառայէ արծաթագին ոք ծառայ. և եղև խնդութիւն բազում յոյժ, և ըստ բանի աւետարանին, ամենեցուն որք ի ժողովրդեանն էին աչք ի մեզ հայէին. էր ընդ մեզ և սինիոր լածարոն, որ առաջնորդէր մեզ յամենայնի. որոյ ազդարարութեամբ ամենեքին միաբան արբաք գինի վասն կենաց կարտինալ Կարաֆային, և մոնսինիոր Էրպային, որք ծառայէին մեզ, որք և ուրախ եղեն յոյժ. նոքա ընթերցան զօրհնութիւն սեղանոյ մերոյ և յեզերիլն զգոհութիւնն։ Եւ յեզերիլն յուղարկեցին զմեզ թօրչիօք յեկեղեցին այնր օսբիտալի ուր եղեալ էին զսրբութիւն քառասուն ժամու, և յետ այն, ի տան մեր։ Վաղիւ հանդերձեալ եմք գնալ ի սեղան Պապին։...

Ցամի տեառն 1751
յունվ. 3 [Հռովմ]

Նուաստ ծառայ
Հ. Վրթանէս Վ. [Ասկերեան]

ՃԾԴ.

Վենետկոյ Հայոց Ս. Խաչ Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը Մխիթար Աբրահօր կենդանութեան ատեն ինչ ինչ պարագաներու մէջ միայն ստիպուած վարեր էին Միաբանութեանս անձինք։ Մելգոնեանի ժամանակն է որ Ուխտս կանոնաւորապէս կը ստանձնէ անոր հոգաբարձութիւնը, որ ցարդ կը շարունակուի։

Հոս պիտի ներկայացնենք նոյն ինքն յիշեալ Գերյ. Նամակագրին հեղինակաւոր տեղեկութիւնները այս սկզբնաւորութեան մասին. ծանօթութիւններ՝ որոնք ստուգիւ նորութիւններ են ի նպաստ անոր պատմութեան։